ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԵՊԼՀ ռեկտոր

պրոֆ. Ս. Տ. Զոլյան

ԿԱՐԳ

ԵՊԼՀ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի կողմից

ավարտական փաստաթղթերի տրամադրման

1. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի (այսուհետ՝ ԵՊԼՀ ԼՇԿ) կողմից տրամադրվող ավարտական փաստաթղթերը պաշտոնապես հավաստում են ունկնդրի կողմից Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ծրագրերից որևէ մեկով նախատեսված դասընթացը կամ ծրագիրն ամբողջությամբ հաջողությամբ ավարտելու փաստը:
2. ԵՊԼՀ ԼՇԿ ավարտական փաստաթղթեր են հանդիսանում *հավաստագիրը* և *վկայագիրը*:
3. *Հավաստագիրը* ավարտական փաստաթուղթ է, որը տրվում է ունկնդրին ԼՇԿ ծրագրերից որևէ մեկով նախատեսված առանձին դասընթաց հաջողությամբ ավարտելու արդյունքում:
4. *Վկայագիրը* ավարտական փաստաթուղթ է, որը տրվում է ունկնդրին ԼՇԿ որևէ ամբողջական ծրագիր հաջողությամբ ավարտելու արդյունքում:
5. Վկայագիրը տրվում է ամբողջական ծրագրով նախատեսված ավարտական ատեստավորման արդյունքում:
6. Հավաստագիրը կարող է տրվել՝

   6.1. ԼՇԿ ծրագրերից որևէ մեկով նախատեսված առանձին դասընթաց հաճախելու և ավարտական ատեստավորումը (թեստավորումը) հաջողությամբ անցնելու արդյունքում.

6.2. ԼՇԿ ծրագրերից որևէ մեկով նախատեսված առանձին դասընթացի ավարտական ատեստավորմանը (թեստավորմանը) մասնակցելու և այն հաջողությամբ անցնելու արդյունքում:

7. ԼՇԿ ծրագրերից որևէ մեկով նախատեսված առանձին դասընթաց կամ ամբողջական ծրագիր ավարտելու, բայց ավարտական ատեստավորում (թեստավորում) չանցնելու կամ հաջողությամբ չհանձնելու, կամ դասընթացի պահանջներով եզրափակիչ ատեստավորում նախատեսված չլինելու դեպքում ունկնդրին տրվում է *մասնակցության տեղեկանք*:

8. Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ծրագրերից որևէ մեկով նախատեսված դասընթացի կամ ամբողջական ծրագրի եզրափակիչ ատեստավորումը անցկացնող հանձնաժողովների կազմը սահմանել՝

8.1. ԼՇԿ ծրագրերից որևէ մեկով նախատեսված առանձին դասընթացի՝ լեզվական որևէ մակարդակի կամ հատուկ կարճաժամկետ դասընթացի եզրափակիչ ատեստավորումը (թեստավորումը) անցկացնող հանձնաժողովում ընդգրկել՝ ԼՇԿ ղեկավարին (նախագահ), ԼՇԿ համապատասխան ծրագրի համակարգողին կամ դասընթացը ներկայացրած ամբիոնի վարիչին և դասավանդող դասախոսին.

8.2. ԼՇԿ որևէ ամբողջական ծրագրի՝ վերապատրաստման ծրագրի կամ լեզվի ուսուցման եզրափակիչ մակարդակի ավարտական ատեստավորումը անցկացնող հանձնաժողովում ընդգրկել՝ համակարգող պրոռեկտորին (նախագահ), ԼՇԿ ղեկավարին և ծրագրի բովանդակային հատվածի պատասխանատու ամբիոնի վարիչին:

Հաստատված է ռեկտորատի 23.06.2011թ. Հ 32 նիստով